**Հավելված 3**

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՊՂԻՆՁ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ (ՆԱԽԿԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԷՆ ԷՌ ԷՄ (ՆԵՅՉՐԼ ՌԻՍՈՐՍ ՄԵՆԵՋՄԵՆԹ)» ՓԲԸ) ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՊՂԻՆՁ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## Կենդանական աշխարհ

Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային մակրոլանջերին, մոտավորապես 1890-2730 մ բացարձակ բարձրությունների վրա ( նկար1) Դաստակերտի հանքի համար հայցվող տարածքում զոնալ բուսականության տիպերից առկա են մարգագետնատափաստանները, դաշտավլուկազգի և տարախոտա-դաշտավլուկազգի ենթալպյան մարգագետինները: Ազոնալ ներկայացված է պետրոֆիլ բուսականությունը ժայռային բացվածքների և քարաթափուկների վրա, ինչպես նաև ջրաճահճային բուսականությանը տարածքում հոսող Այրիգետի վտակ հանդիսացող Կոշկոշտի և Դաստակերտ գետերի ափերին: Ուսումնասիրվող տարածքում անտառներ չկան, դենդրոֆլորան ներկայացված է գիհու, սալորենու, տանձենու, սզնու, մասրենու բուսուտներով:



Նկար. 1

Վերը նկարագրված ողջ լանդշաֆտային և բուսական տեսակները մեծապես կանխորոշում են Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի համար հայցվող տարածքում բնակվող և հանդիպող ողնաշարավորների տեսակային կազմը:

## ՑԱՄԱՔԱՅԻՆ ԱՆՈՂՆԱՇԱՐՆԵՐ

## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նախապատրաստական աշխատանքները ընդգրկել են բոլոր հասանելի գրական տվյալների վերլուծությունը: Վերհանվել են Սյունիքի մարզի, ինչպես նաև Սիսիանի տարածաշրջանի անողնաշար կենդանիների ֆաունայի մասին հրատարակված տվյալները, այդ թվում հազվագյուտ և անհետացող կենդանատեսակների վերաբերյալ:

### Առկա տվյալներ (Սյունիքի մարզ)

Համաձայն Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC) նորմատիվների, աշխատանքի առաջին փուլը նախատեսում է առկա նյութերի վերլուծությունը և ուսումնասիրվող խմբերի ընտրությունը:

Հետագա վերլուծության ընթացքում վեր են հանվել տվյալներ մի շարք համեմատաբար լավ ուսումնասիրված բարձրագույն տաքսոնների (կարգաբանական խմբերի) վերաբերյալ: Այս տաքսոնները կազմում են Հայաստանի ֆաունայի մոտ 1/8-ը, ունեն զանազան էկոլոգիական կապերմ ուստի, ստացված տվյալները բավական ռեպրեզենտատիվ են (ներկայացուցչական):

Հայաստանի ֆաունայի տարբեր բարձրագույն կարգաբանական խմբերին նվիրված աշխատությունների վերլուծությունը թույլ տվեց Սյունիքի մարզից նշել 1780 տեսակ, որոնք պատկանում են Միջատների դասին և Փափկամարմինների տիպին (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Սյունիքի մարզի և Սիսիանի տարածաշրջանի անողնաշար կենդանիների ֆաունայի ակնարկ

| Տաքսոն | Տեսակների քանակը | | Տեղակատվության աղբյուրները |
|---|---|---|---|
| | Սյունիքի մարզ | Սիսիանի տարածաշրջան | |
| Տիպ թաթկամարմիններ (Mollusca) (միայն ցամաքային) | 71 | 31 | Акрамовский, 1967 |
| Տիպ Հատվածոտանիներ (Arthropoda) | | | |
| Դաս Միջատներ (Insecta) | | | |
| Կարգ Ուղղաթևեր (Orhtoptera) | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Վերնաընտանիք Ծղրիդներ (Tettigonoidea) | 26 | 8 | Авагян, 1984 |
| Վերնաընտանիք Մորեխներ (Acridoidea) | 66 | 18 | Авагян, 1975 |
| Կարգ Հավասարաթևեր (Homoptera) | | | |
| Ենթակարգ Որդաններ (Coccoidea) | 38 | 18 | Борхсениус, 1949, Тер-Григорян, 1973 |
| *Դենդրոֆիլ հավասարաթևեր | 61 | 21 | Мирзоян, 1977 |
| Կարգ Կիսակարծրաթևեր (Hemiptera) | | | |
| Դենդրոֆիլ կիսակարծրաթևեր | 5 | 2 | Мирзоян, 1977 |
| Կարգ Կարծրաթևեր կամ բզեզներ (Coleoptera) | | | |
| Ընտանիք Գնայուկ բզեզներ (Carabidae, pars.) | 120 | 57 | Яблоков-Хнзорян, 1976 |
| Վերնաընտանիք Թերթիկաբեղավորներ (Scarabaeoidea) | 119 | 52 | Яблоков-Хнзорян, 1967 |
| Ընտանիք Չրխկաններ (Elateridae) | 49 | 10 | Марджанян, 1986 |
| Ընտանիք Երկարաբեղիկներ (Cerambycidae) | 175 | 56 | Плавильщиков, 1949 |
| Ընտանիք Ծարախահաններ (Meloidae) | 31 | 16 | Яблоков-Хнзорян, 1983 |
| Ընտանիք Սևամարմիններ (Tenebrionidae) | 65 | 28 | Яблоков-Хнзорян, 1983, Nabozhenko et al., 2021 |
| Ընտանիք Ընդակերներ (Bruchidae) | 36 | 6 | Карапетян, 1985 |
| Ընտանիք Փղիկներ (Curculionidae) | 160 | 102 | Тер-Минасян, 1947 |
| * Դենդրոֆիլ կարծրաթևեր | 126 | 36 | Мирзоян, 1977 |
| Կարգ Թեփուկաթևեր կամ թիթեռներ (Lepidoptera) | | | |
| Ցերեկային թիթեռներ (Rhopalocera) | 126 | 54 | Tuzov (ed.), 1997, 2000 |
| Ընտանիք Երկրաչափ թիթեռներ (Geometridae) | 170 | 65 | Վարդիկյան, 1980 |
| Ընտանիք Բվիկներ (Noctuidae) (դենդրոֆիլ) | 136 | 71 | Мирзоян, 1991 |
| Heterocera ենթակարգի այլ դենդրոֆիլ տեսակներ | 59 | 15 | Мирзоян, 1977 |
| Կարգ Երկթևեր (Diptera) | | | |
| Ընտանիք Մլակներ (Simuliidae) | 28 | 7 | Тертерян, 1968 |
| Դենդրոֆիլ երկթևեր | 2 | 2 | Мирзоян, 1977 |
| Կարգ Թաղանթաթևեր (Hymenoptera) | | | |
| Ընտանիք Մրջյուններ (Formicidae) | 65 | 16 | Аракелян, 1994 |
| Ընտանիք Էնցիրտիդներ (Encyrtidae) | 9 | 2 | Эртевцян, 1986 |
| * Դենդրոֆիլ թաղանթաթևեր | 37 | 14 | Мирзоян, 1977 |

| | | | |
|---|---|---|---|
| Ընդամենը | 1780 | 698 | |

*Բացառությամբ առանձին հաշվարկած ընտանիքների.

**Առկա տվյալներ (Սիսիանի տարածաշրջան)**

Սիսիանի տարածաշրջանի ֆաունայի վերաբերյալ տվյալները նույնպես ամփոփված են Աղյուսակ 1-ում: Ընդհանուր առմամբ, տարածաշրջանից նշված է 698 տեսակ:

**Հազվադեպ և անհետացող հատուկ պահպանվող տեսակներ**

Հայաստանի Կարմիր գրքում գրանցված հազվադեպ և անհետացող 153 անողնաշար կենդանատեսակներից Սյունիքի մարզում ներկայացված են 55-ը (5 փափկամարմին և 50 միջատ): Սրանցից միայն 10 տեսակի միջատներ հանդիպում են Սիսիանի տարածաշրջանում; ցուցակը բերվում ստորև.

**ՀՀ Կարմիր գրում գրանցված անողնաշար կենդանիների ցանկ**

**Միջատներ - Insecta**

**Կարգ Ուղղաթևեր (Orthoptera)**

1. Մորեխ հայկական - Gomphocerus armeniacus (Uvarov, 1931)

**Կարգ Կարծրաթևեր կամ բզեզներ (Coleoptera)**

2. Կաղնու մեծ երկարաբեղիկ - Cerambyx cerdo acuminatus Motschulsky, 1852
3. Երկգիծ երկարաբեղիկ - Dorcadion bistriatum Pic, 1898
4. Գորբունովի երկարաբեղիկ - Dorcadion gorbunovi Danilevsky, 1985
5. Սևլճյան երկարաբեղիկ - Dorcadion sevliczi Danilevsky, 1985

**Կարգ Թեփուկաթևեր կամ թիթեռներ (Lepidoptera)**

6. Մնեմոզինա կամ սև ապոլոն - Parnassius mnemosyne rjabovi Sheljuzhko, 1935
7. Ալեքսանոր առագաստաթիթեռ - Papilio alexanor orientalis Romanoff, 1884
8. Իֆիգենիա կապտաթիթեռ – Agrodiaetus iphigenia araratensis De Lesse, 1957
9. Պրոզերպինա իլիկաթիթեռ - Proserpinus proserpina (Pallas, 1772)
10. Կուզնեցովի երկրաչափ թիթեռ - Ortholitha kuznetzovi Wardikian, 1957

Որպես ներկայացուցչական (ռեպրեզենտատիվ) խումբ ընտրվել են բզեզների (Coleoptera) կարգի ներկայացուցիչները: Բացի բզեզների ֆաունայի վերլուծությունից, հատուկ ուշադրություն է հատկացվել ՀՀ Կարմիր գրքում գրանցված բոլոր կարգաբանական խմբերի տեսակների հայտնաբերմանը:

**Դաշտային հետազոտություններ**

Ներկայացուցչական (ռեպրեզենտատիվ) խմբի՝ բզեզների տեսակային կազմը որոշելու համար կիրառվել են միջատաբանական հետազոտությունների ավանդական մեթոդներ՝ ձեռքի հավաք բուսականությունից, քարերի տակից, հողի մակերեսից, հավաք ցանցի միջոցով (այդ թվում հնձման եղանակով), բույսերից թափտալով և այլն: Քանի որ աշխատանքներն իրականացվել են միջատների մեծամասնության ակտիվության ավարտից հետո, որոնվել են նաև միջատների

մնացարդները, թրթուռները և գործունեության նշանները (թռիչքի անցքեր, թրթուռային անցքուղիներ):

Տարածքի համար ընդհանուր առմամբ նշվել են 18 ընտանիքների պատկանող 61 տեսակի բզեզներ, այդ թվում վերին հատվածում՝ 26 և ստորին հատվածում 39 տեսակ (տես Աղյուսակ 2-ը):

Աշխատանքների ընթացքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված անողնաշար կենդանիների որևէ տեսակ չի հայտնաբերվել:

Աղյուսակ 2. Դաստակերտի պլանավորվող հանքի բզեզների ֆաունայի կազմը

| NN | Նյութի հավաքի վայրերը / Բզեզների տեսակները | Վերին հատված | Ստորին հատված | Ծանոթություն* |
|---|---|---|---|---|
| | **1. Ընտանիք Գնայուկ բզեզներ - Carabidae** | | | |
| 1. | Carabus cribratus Quensel, 1806 | + | | EC |
| 2. | Cicindela desertorum Dejean, 1825 | | + | EC |
| 3. | Bembidion caucasicus (Motschulsky, 1844) | | + | EC |
| 4. | Panagaeus cruxmajor (Linnaeus, 1758 | + | | |
| 5. | Harpalus rufipes (Degeer, 1774) | | + | |
| 6. | Harpalus serripes (Quensel, 1806) | + | | |
| 7. | Harpalus rubripes (Duftschmid, 1812) B | + | + | |
| 8. | Harpalus cf. saxicola Dejean, 1829 | + | | |
| 9. | Badister bipustulatus (Fabricius, 1792) | + | | |
| 10. | Calathus ambiguus (Paykull, 1790) | + | + | |
| 11. | Paradromius linearis (Olivier, 1795) | | + | |
| 12. | Cymindis scapularis Schaum, 1857 | + | + | |
| 13. | Brachinus explodens Duftschmid, 1812 | | + | |
| | **2. Ընտանիք լողաբզեզներ – Dytiscidae** | | | |
| 14. | Platambus lunulatus (Steven, 1829) | | + | |
| | **3. Ընտանիք Լեշակերներ –Silphidae** | | | |
| 15. | Silpha obscura Linnaeus, 1758 | | + | |
| | **4. Ընտանիք Սրամարմիններ Staphylinidae** | | | |
| 16. | Tachynus cf. laticollis Gravenhorst, 1802 | | + | |
| 17. | Xantholinus sp. | + | | |
| 18. | Staphylinus cf. eurytus | + | | |
| 19. | Tasgius gracilicornis (Hochhuth, 1849) | + | + | |
| 20. | Phylonthus cf. succicola Thomson, 1860 | | + | |
| 21. | Quedius sp. | | + | |
| 22. | Ocypus picipennis (Fabricius, 1792) | + | + | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **5. Ընտանիք Histeridae** | | | |
| 23. | Saprinus sp. | | + | |
| 24. | Hister quadrimaculatus Linnaeus, 1758 | + | + | |
| | **Ընտանիք Ջրասերներ - Hydrophylidae** | | | |
| 25. | Sphaeridium scarabaeoides (Linnaeus, 1758) | | | |
| | **6. Ընտանիք Թերթիկաբեղավորներ – Scarabaeidae** | | | |
| 26. | Onthophagus fracticornis (Preyssler, 1790) | | + | |
| 27. | Euonicicellus fulvus Goeze, 1777 | | | |
| 28. | Aphodius fimetarius (Linnaeus, 1758) | | + | |
| 29. | Chilothorax distinctus (Müller 1776) | | + | |
| 30. | Blitopertha nigripennis (Reitter, 1888) | + | | |
| 31. | Oxythyrea cinctella (Schaum, 1841) | | + | |
| | **7. Ընտանիք Ոսկեբզեզներ - Buprestidae** | | | |
| 32. | Capnodis tenebricosa (Olivier, 1790) | + | | |
| 33. | Sphenoptera fallatrix Obenberger, 1927 | + | | ET |
| 34. | Meliboeus robustus (Kuester, 1852) | | + | |
| | **8. Ընտանիք Փափկամարմին բզեզներ – Cantharidae** | | | |
| 35. | Cantharis cf. melaspis (Chevrolat, 1854) | | + | |
| | **9. Ընտանիք Մանրաբզեզներ - Melyridae** | | | |
| 36. | Malachius sp. | | + | |
| | **10. Ընտանիք Dasytidae** | | | |
| 37. | Enicopus pilosus (Scopoli, 1763) | + | | |
| | **11. Ընտանիք Սևամարմիններ – Tenebrionidae** | | | |
| 38. | Tentyria tessulata Tauscher, 1812 | | | |
| 39. | Blaps lethifera Marsham, 1802 | + | | |
| 40. | Gonocephalum granulatum pusillum (Fabricius, 1791) | | + | |
| 41. | Crypticus quisquillius (Linnaeus, 1761) | | | |
| 42. | Lagria hirta (Linnaeus, 1758) | | + | |
| | **12. Ընտանիք Mordellidae** | | | |
| 43. | Mordellidae sp. | | + | |
| | **13. Ընտանիք Փայլաբզեզներ - Nitidulidae** | | | |
| 44. | Meligethes sp. | | + | |
| | **14. Ընտանիք Զատիկներ - Cocinellidae** | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 45. | Hippodamia variegata (Goeze, 1777) | + | | |
| 46. | Adalia bipunctata (Linnaeus, 1758) | + | + | |
| 47. | Cocinella septempunctata (Linnaeus, 1758) | + | + | |
| | **15. Ընտանիք Երկարաբեղիկներ - Cerambycidae** | | | |
| 48. | Pseudovadonia livida bicarinata (Arnold, 1869) | | + | |
| | **16. Ընտանիք Տերևակերներ - Chrysomelidae** | | | |
| 49. | Cryptocephalus concolor Suffrian, 1847 | | + | |
| 50. | Chrysolina herbacea (Duftschmid, 1825) | | + | |
| 51. | Altica sp. 1 | + | | |
| 52. | Phyllotreta cf. nigripes (Fabricius, 1775) | + | | |
| 53. | Psylliodes sp. | + | | |
| 54. | Spermophagus sp. | | + | |
| | **17. Ընտանիք Brenidae** | | | |
| 55. | Apion s.l. sp. | | + | |
| | **18. Ընտանիք Փղիկներ - Curculionidae** | | | |
| 56. | Polydrusus inustus Germar, 1823 | | + | |
| 57. | Sitona sp. | | + | |
| 58. | Psallidium maxillosum (Fabricius, 1792) | + | | |
| 59. | Cleonis pigra (Scopoli, 1763) | | + | |
| 60. | Cyphocleonus dealbatus (Gmelin, 1790) | | + | |
| 61. | Larinus sturnus (Schaller, 1783) | + | | |
| | **Ընդամենը բզեզներ** | **26** | **39** | |

**Հավելված**

Ուսումնասիրված տարածքի բզեզների որոշ տեսակներ




| | |
|---|---|
| *Carabus cribratus* ցայտագնայուկ բզեզի վերնաթևերը | Գնայուկ բզեզ *Cymindis scapularis* |
|  |  |
| Սրամարմին բզեզ *Ocypus picipennis* | Հիստերիդ բզեզ *Hister quadrimaculatus* |
|  |  |
| Կոյաբզեզ *Chilothorax distinctus* | Սևամարմին բզեզ *Gonocephalum granulatum pusillum* |

## ՈՂՆԱՇԱՐԱՎՈՐՆԵՐ

### Ձկներ

Հետազոտության տարածքը

Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի ազդեցության գոտում գտնվող Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետում և Այրիգետում ձկների հայտնաբերման նպատակով 27-28.10.2025թ. իրականացվել են ձկնաբանական դիտարկումներ և նմուշառումներ հետևյալ աշխարհագրական 30 կետում (տե՛ս Աղյուսակ 1 և ուսումնասիրման մեթոդները):

Աղյուսակ 1.

Ձկնաբանական հետազոտությունների  վայրերը

| Նմուշառման վայրը | Կոորդինատները | Ուսումնասիրման գործիքը և մեթոդը | Վայրի անվանումը և ուսումնասիրության արդյունքը |
|---|---|---|---|
| 1 | 39.363, 46,024 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 2 | 39.362, 46.023 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 3 | 39.361, 46.023 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 4 | 39.360, 46.023 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 5 | 39.364, 46.024 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 6 | 39.365, 46.023 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 7 | 39.366, 46.023 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 8 | 39.367, 46.023 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 9 | 39.368, 46.023 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | 39.369, 46.023 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 11 | 39.370, 46.023 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 12 | 39.370, 46.024 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 13 | 39.372, 46.025 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 14 | 39.374, 46.025 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 15 | 39.376, 46.026 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 16 | 39.378, 46.026 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 17 | 39.379, 46.027 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 18 | 39.379, 46.026 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 19 | 39.380, 46.027 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |

| | | | |
|---|---|---|---|
| 20 | 39.387, 46.020 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 21 | 39.388, 46.019 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 22 | 39.389, 46.019 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 23 | 39.390, 46.019 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 24 | 39.391, 46.018 | Ձեռքի ձկնորսական ցանց, ակնադիտարկում: | Աղջկաձոր (Կըշտկոշկտի) գետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 25 | 39.391, 46.018 | Ձեռքի ձկնորսական ցանց, խեցգետնորսիչներ, վերիան ցանց, ակնադիտարկում: | Այրիգետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 26 | 39.393, 46.017 | Ձեռքի ձկնորսական ցանց, խեցգետնորսիչներ, վերիան ցանց, ակնադիտարկում: | Այրիգետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 27 | 39.394, 46.017 | Ձեռքի ձկնորսական ցանց, խեցգետնորսիչներ, վերիան ցանց, ակնադիտարկում: | Այրիգետ: Հայտնաբերվել է 3 ձկնատեսակ՝ կողակ, արևելյան տառեխիկ, Կուրի բեղաձուկ |
| 28 | 39.393, 46.016 | Ձեռքի ձկնորսական ցանց, | Այրիգետ: Ձկներ չեն հայտնաբերվել |

| | | | |
|---|---|---|---|
| | | խեցգետնորսիչներ, վերհան ցանց, ակնադիտարկում: | |
| 29 | 39.394, 46.015 | Ձեռքի ձկնորսական ցանց, խեցգետնորսիչներ, վերհան ցանց, ակնադիտարկում: | Այրիգետ: Ձկներ չեն հայտնաբերվել |
| 30 | 39.394, 46.014 | Ձեռքի ձկնորսական ցանց, խեցգետնորսիչներ, վերհան ցանց, ակնադիտարկում: | Այրիգետ: Հայտնաբերվել է 2 ձկնատեսակ՝ արևելյան տառեխիկ, Կուրի բեղաձուկ: |

## Ուսումնասիրման մեթոդները

Ձկների որսը կատարվել է 70 սմ տրամագիծ ունեցող վերհան ձկնորսական ցանցով (ցանցի ճեղքերի մեծությունը 0.5 սմ), ձեռքի ձկնորսական ցանցով (ցանցի ճեղքերի մեծությունը 1.0 սմ), 90 սմ տրամագիծ ունեցող դնովի խեցգետնորսիչներով, (ցանցի ճեղքերի մեծությունը 0.5 սմ):

Խեցգետնորսիչները տեղադրվել են գետի առանձին հատվածներում, ափերին հարակից տարածքներում 0,5-1,5 մ խորության վրա: Խեցգետնորսիչները ջրում մնացել են 2-3 ժամ: Աղջկաձոր գետի ուսումնասիրման համար օգտագործվել է ձեռքի ձկնորսական ցանցը՝ այն պարբերաբար սուզելով ջրի մեջ և որս կատարելով սկսած ակունքից (թունելի միջից) մինչև Այրիգետի հետ միախառնվելու վայրը (մինչ այդ Աղջկաձոր գետը մոտ 400 մ հոսում է ստորգետնյա թունելով/խողովակով և այստեղ որևէ ձկնաբանական դիտարկում հնարավոր չէր իրականացնել):

## Ուսումնասիրությունների արդյունքները

1. Ներկայում Աղջկաձոր (Կըշտկոշտի) գետում բացակայում է որևէ ձկնատեսակ: Նման իրավիճակը պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝

հանքային նյութերով ջրի աղտոտվածությամբ, ձկների համար կերային բազայի (բենթոս, պլանկտոն) խիստ սակավությամբ, ձկների տեսակների մեծ մասի համար անանցանելի արգելքների (ստորգետնյա խողովակներ, հիդրոտեխնիկական կառույցներ) առկայությամբ:

2. Այրի գետի ուսումնասիրված հատվածներում հանդիպում է երեք ձկնատեսակ՝

- Արևելյան տառեխիկ *Alburnoides eichwaldii*
- Կուրի բեղաձուկ *Barbus cyri*
- Կողակ *Capoeta capoeta*

Քանակապես գերակռում են արևելյան տառեխիկը և Կուրի բեղաձուկը, որոնք կազմում են որսված ձկների 98,2 %:



Կուրի բեղաձուկ



Արևելյան տառեխիկ

## ՑԱՄԱՔԱՅԻՆ ՈՂՆԱՇԱՐԱՎՈՐՆԵՐ

Սույն հաշվետվության համար նյութ են ծառայել գրականության տվյալները, ինչպես նաև դաշտային հետազոտությունների արդյունքում ստացված տվյալները, որոնք հավաքվել են Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի համար նախատեսված տարածքում:

Հետազոտական աշխատանքները սկսելուց առաջ մեր կողմից կատարվել է տարածքին վերաբերվող հասանելի գիտական գրականության մշակում (հոդվածներ, գրքեր, հաշվետվություններ, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հավաքածու): Մեր ենթակայության տակ գտնվող գրականության տվյալների մշակման ընթացքում (Даль С.К. 1954, Гептнер В.Г. и др.

1967.,Мартиросян Б.А., Папанян С.Б. 1983., Бибиков Д.И.1985, Агаджанян Ф.С. 1986, Касабян М.Г.1986, 2001, Попов Г.Ю. 2003, Авагян А.В.2010, Агасян А. Л., 1985,1986,1996, Aram Aghasyan and all,2013, Даревский И. С.,1957, 1975, Петросян Р 2018, Туниев Б. С. И др. 2009, ArakelyanM. and all 2011, Adamian, M.S. and Klem, D. Jr. 1999. А. Ф. Ляйстер, Г. В. Соснин,1942, Դանիելյան Ֆ. 2016, ՀՀ Կենդանիների Կարմիր Գիրք 1987,2010., Ecoregional Conservation Plan for the Caucasus 2010,2012., հաշվետվություններ WWF և ASPB՝ Կարևորագույն թռչնաբանական և կենսաբազմազանության (IBA, KBA) տարածքների մասին (Դրանց հիման վրա հայտնաբերվել են բազմաթիվ տեսակներ, որոնք նկատվել են այս տարածքում վերջին տասնամյակների ընթացքում: Բացի այս տվյալներից, մենք օգտագործել ենք նաև նախնական տվյալներ «The “EMERALD” network in the republic of Armeniai 2016», առցանց հարթակներից տվյալներ (https://observation.org) և (https://www.ibat-alliance.org/):

Ելնելով վերոգրյալից՝ մենք կազմել ենք ողնաշարավորների տեսակների նախնական ցուցակները, որոնք ակնկալվում է, որ կհայտնաբերվեն այս տարածքում, ինչպես նաև այն տեսակները, որոնք նշվել են մեր հետազոտության ընթացքում (**Աղյուսակ 1,2,3**): Բոլոր աղյուսակներում նշված են ԲՊՄՄ Կարմիր ցուցակում և Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակները: Թռչունների հետ կապված աղյուսակում նշվում են նաև տեսակների առկայության կարգավիճակը Հայաստանում և ակնկալվող կարգավիճակը ուսումնասիրվող տարածքում:

Բացի այդ, մենք առանձնացրել ենք ստացիոնար դիտակետեր ամբողջ նախագծված տարածքում որտեղ կարճաժամկետ կանգառներ են արվել՝ դիտարկելու թռչունների և սողունների ակտիվությունը:

Տարածքի հերպետոֆաունան որոշվել է հիմնականում տեսողական հանդիպումների և մողեսների և օձերի (քարերի, թփերի տակ և այլն) ապրելավայրերի զննությամբ:

Հետազոտվող տարածքում գրանցված թռչունների և տեսակների դիտարկման համար օգտագործվել են “Kite 10x40” հեռադիտակ և “Kowa” մոնոդիտակ՝ 20x40x60 խոշորացումով: Ուսումնասիրվող տարածքում թռչունների տեսակների կազմը որոշելու համար օգտագործվել են դաշտային որոշիչներ՝ Collins Bird Guide 2009, Dick Forsman 2016:

Սողունների և երկկենցաղների նույնականացման համար օգտագործվել է Դանիելյան Ֆ., Առաքելյան Մ որոշիչը 2016թ.: Փոքր և միջին կաթնասունների որոշման համար օգտագործվել է «Кузнецова Б. “Определитель позвоночных животных фауны СССР” 1975.» որոշիչը:

## Սողուններ և երկկենցաղներ

Սողունների և երկկենցաղների դիտարկումներ են իրականացվել նախագծված տարածքում և անմիջական շրջակայքում: Հարկ է ի սկզբանե նշել, որ սողունների թիվը շատ քիչ է, չնայած նրանցից շատերի համար հարմար միջավայրերի առկայությանը: **Աղյուսակ 3**-ում ներկայացված են այն տեսակները, որոնք նշված են գրականության մեջ և այլ աղբյուրներում, ինչպես նաև փաստացի գրանցված են ծրագրի տարածքում:

**Աղյուսակ. 3** Ուսումնասիրվող տարածքի սողունների և երկկենցաղների ցանկ

| Family | No | Scientific names | Armenian name | 1 | 2 | 3 |
|---|---|---|---|---|---|---|
| **Reptilia** | | | | | | |
| Agamidae | 1 | Laudakia caucasia | Կովկասյան ագամա | + | + | |
| Lacertidae | 2 | Darevskia raddei | Ռադդեյի ժայռային մողես | + | + | |
| | 3 | Lacerta media | Միջին մողես | + | + | |
| Colubridae | 4 | Eirenis punctatolineatus | Հայկական Էյրենիս | + | - | |
| | 5 | *Zamenis hohenackeri* | Անդրկովկասյան սահնօձ | + | + | LC vu |
| | 6 | *Telescopus fallax* | Կովկասյան կատվաօձ | - | + | LC vu |
| Viperidae | 7 | Macrovipera lebetinus | Գյուրզա | + | - | |
| | 8 | *Vipera raddei* | Հայկական իժ | + | - | NT vu |
| **Amphibia** | | | | | | |
| Bufonidae | 1 | Bufo viridis | Կանաչ դոդոշ | + | + | |
| Ranidae | 2 | Pelophylax ridibundus | Լճագորտ | + | + | |

1. - առկայությունը մասին տեղեկատվություն տարբեր աղբյուրներից
2. - առկայության տվյալներ՝ ըստ մեր հետազոտության
3. - կարմիր գույնով նշշված են Միջազգային և ՀՀ կարմիր գրքում գրանցված տեսակները

**Աղյուսակ 3**-ում ներկայացված գրական աղբյուրների հիման վրա ընդգրկված 8 տեսակ սողուններից և 2 տեսակ երկկենցաղներից դաշտային ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել են 5 տեսակ սողուններ և 2 տեսակ ջրիմուռներ: Կովկասյան կատվաօձը մինչև այժմ այս տարածքում չէր նշվել և դաշտային աշխատանքների ընթացքում արձանագրվել է առաջին անգամ: Շատ հազվագյուտ Անդրկովկասյան սահնօձը նկատվել է միայն մեկ անգամ՝ Դաստակերտ գետի և անտառային թփերի բուսականությամբ ծածկված փոքր տարածքի միջև

ընկած հարթ բացատում:Պետք է նշել, որ այս առանձնյակի հայտնաբերման վայրը բնորոշ չէ այս տեսակի բնակավայրի համար, քանի որ այս տեսակը սովորաբար ապրում է ավելի անտառապատ տարածքներում և ցածր բարձրություններում:

Կովկասյան ագաման, Ռադդեյի ժայռային մողեսը և Միջին մողեսը նկատվել են տարածքի ամենացածր հատվածում՝ մինչև 2000 մ բարձրության վրա փոքրիկ քարաժայռային ելուստներում, որտեղ աճում էր պետրոֆիլ բուսականություն: Հատկանշյալ թունավոր օձերից՝ գյուրզան և հայկական իժը, դաշտային այցելությունների ընթացքում չեն նկատվել, չնայած գրականության մեջ նշված են եղել տվյալ տարածքի համար: Կանաչ դոդոշը նկատվել է լքված այգիներում և հին կառույցների մոտ գտնվող խոնավ տեղերում, իսկ լճագորտը՝ Արիգետ գետի վտակների Կոշկշտի և Դաստակերտ ջրերում:

## Թռչուններ

Ելնելով նախատեսված տարածքով գիտարշավների ընթացքում ձեռք բերված նյութերից և գրականությունից՝ կազմվել է **Աղյուսակ 1**-ը, որը ներառում է տարածքում և նրա անմիջական հարևանությամբ որոշ թռչունների ակնկալվող ներկայությունը: Տվյալ տարածքում հնարավոր բնակվող տեսակներն ընտրելիս հաշվի ենք առել դրանցից յուրաքանչյուրին բնորոշ կենսամիջավայրերի համապատասխանությունը (լեռնատափաստան, թփուտներ, քարակույտեր, ոչ մեծ ժայռեր, ջուր, խոնավ տարածքներ, մշակովի գյուղատնտեսական նշանակության հողեր և այլն): Թռչունների տեսակները, որոնք և՛ ենթադրաբար, և՛ փաստացի նշվել են դաշտային հետազոտության ընթացքում, ստորև աղյուսակում նշված են ըստ բնակության կարգավիճակի, թե՛ Հայաստանում, թե՛ հետազոտվող տարածքում:

**Աղյուսակ 1.** Ենթադրվող և իրականում գրանցված թռչնատեսակների ցանկը

| No | Armenian names | Scientific names | 1 | 2 | 3 | IUCN | ՀՀ Կ.Գ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Accipitridae** | | | | | | |
| 1 | Կրետակեր | Pernis apivorus | Bbr | Nbr | v | | |
| 2 | Սպիտակագլուխ անգղ | *Gyps fulvus* | YrBr | Nbr | | LC | VU D1 |
| 3 | Քարարծիվ | *Aquila chrysaetos* | Bbr | Nbr | v | LC | VU D1 |
| 4 | Դաշտային մկնաճուռակ | Circus cyaneus | W | W | | | |
| 5 | Լորաճուռակ | Accipiter nisus | YrBr | Nbr | v | | |
| 6 | Տափաստանային ճուռակ | Buteo rufinus | YrBr | Nbr | v | | |
| | **Falconidae** | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **7** | Սովորական հողմավար բազե | Falco tinnunculus | YrBr | Br | v | | |
| | **Phasianidae** | | | | | | |
| **8** | Քարակաքավ | Alectoris chukar | YrBr | Br? | | | |
| **9** | Մոխրագույն կաքավ | Perdix perdix | YrBr | Br | v | | |
| **10** | Լոր | Coturnix coturnix | Bbr | Bbr | v | | |
| | **Columbidae** | | | | | | |
| **11** | Թխակապույտ աղավնի | Columba livia | YrBr | Nbr | v | | |
| **12** | Հոբալ | Columba oenas | YrBr | Nbr | v | | |
| **13** | Անտառային աղավնի | Columba palumbus | YrBr | Br | v | | |
| | **Cuculidae** | | | | | | |
| **14** | Սովորական կկու | Cuculus canorus | Bbr | Nbr | v | | |
| | **Strigidae** | | | | | | |
| **15** | Տնային բվիկ | Athene noctua | YrBr | Bbr | v | | |
| | **Apodidae** | | | | | | |
| **16** | Սև մանգաղաթև | Apus apus | Bbr | Nbr | v | | |
| | **Caprimulgidae** | | | | | | |
| **17** | Այծկիթ | Caprimulgus europaeus | Bbr | Bbr | v | | |
| | **Meropidae** | | | | | | |
| **18** | Ոսկեգույն մեղվակեր | Merops apiaster | Bbr | Bbr | v | | |
| | **Upupidae** | | | | | | |
| **19** | Հոպոպ | Upupa epops | Bbr | Bbr | v | | |
| | **Alaudidae** | | | | | | |
| **20** | Տափաստանային արտույտ | Melanocorypha calandra | Bbr | Nbr | | | |
| **21** | Երկբծավոր արտույտ | Melanocorypha bimaculata | Bbr | Nbr | v | | |
| | **Hirundinidae** | | | | | | |
| **22** | Ժայռային ծիծեռնակ | Hirundo rupestris | Bbr | Nbr | | | |
| **23** | Գյուղական ծիծեռնակ | Hirundo rustica | Bbr | Bbr | v | | |
| **24** | Քաղաքային ծիծեռնակ | Delichon urbicum | Bbr | Nbr | | | |
| | **Motacillidae** | | | | | | |
| **25** | Դաշտային ձիուկ | Anthus campestris | Bbr | Bbr | | | |
| **26** | Դեղին խաղտտնիկ | Motacilla flava | Bbr | Nbr | v | | |
| **27** | Սպիտակ խաղտտնիկ | Motacilla alba | YrBr | Br | v | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **28** | Լեռնային խաղտտնիկ | Motacilla cinerea | YrBr | Br | v | | |
| | **Muscicapidae** | | | | | | |
| **29** | Արշալուսիկ | Erithacus rubecula | YrBr | Nbr | v | | |
| **30** | Կապտափող սոխակ | Luscinia svecica | Bbr | Nbr | | | |
| **31** | Սևուկ կարմրատուտ | Phoenicurus ochruros | YrBr | Br | v | | |
| **32** | Մարգագետնային չքչքան | Saxicola rubetra | Bbr | Bbr | v | | |
| **33** | Սևագլուխ չքչքան | Saxicola torquatus | Bbr | Nbr | | | |
| **34** | Սովորական քարաթռչնակ | Oenanthe oenanthe | Bbr | Bbr | v | | |
| | **Turdidae** | | | | | | |
| **35** | Սև կեռնեխ | Turdus merula | YrBr | Br | v | | |
| | **Sylviidae** | | | | | | |
| **36** | Մոխրագույն շահրիկ | Sylvia communis | Bbr | Bbr | v | | |
| | **Muscicapidae** | | | | | | |
| **37** | Մոխրագույն ճանճորս | Muscicapa striata | Bbr | Nbr | v | | |
| | **Paridae** | | | | | | |
| **38** | Մեծ երաշտահավ | Parus major | YrBr | Br | | | |
| | **Sittidae** | | | | | | |
| **39** | Ժայռային փոքր սիտեղ | Sitta neumayer | YrBr | Br | v | | |
| | **Laniidae** | | | | | | |
| **40** | Ժուլան | Lanius collurio | Bbr | Bbr | v | | |
| **41** | Սևաճակատ շամփրուկ | Lanius minor | Bbr | Bbr | | | |
| | **Corvidae** | | | | | | |
| **42** | Սովորական կաչաղակ | Pica pica | YrBr | Br | v | | |
| **43** | Անտառային կաչաղակ | Garrulus glandarius | YrBr | Br | v | | |
| **44** | Մոխրագույն ագռավ | Corvus corone | YrBr | Br? | v | | |
| **45** | Սև ագռավ | Corvus corax | YrBr | Nbr | v | | |
| | **Sturnidae** | | | | | | |
| **46** | Սովորական սարյակ | Sturnus vulgaris | YrBr | Nbr | v | | |
| | **Passeridae** | | | | | | |
| **47** | Տնային ճնճղուկ | Passer domesticus | YrBr | Br | | | |
| **48** | Դաշտային ճնճղուկ | Passer montanus | YrBr | Br | v | | |

| | Fringillidae | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **49** | Ամուրիկ | Fringilla coelebs | YrBr | Br | | | |
| **50** | Կարմրակատար | Carduelis carduelis | YrBr | Br | | | |
| **51** | Կանեփնուկ | Carduelis cannabina | YrBr | Br | v | | |
| | **Emberizidae** | | | | | | |
| **52** | Սովորական դրախտապան | Emberiza citrinella | W | W | | | |
| **53** | Լեռնային դրախտապան | Emberiza cia | YrBr | Br | v | | |
| **54** | Կորեկնուկ | Miliaria calandra | YrBr | Br | v | | |

1.-Հայաստանում կարգավիճակը
2.- Ծրագրային տարածքում կարգավիճակը
V - առկայության տվյալներ՝ ըստ մեր հետազոտության
IUCN – ԲՊՄՄ կարգավիճակ
ՀՀ ԿԳ - Կարգավիճակը ըստ ՀՀ կենդանիների կարմիր գրքի
YrBr -առկա կլոր տարի, բնադրող
YrNbr - առկա կլոր տարի, չբնադրող
Nbr - չբնադրողղ
Bbr -բնադրող չվող
Br -բնադրող
W - ձմեռող

Վերլուծելով **աղյուսակ 1**-ը կարող ենք տեսնել, որ ուսումնասիրող տարածքում ըստ գրական տվյալների և դաշտային ուսումնասիրությունների ընթացքում ստացված արդյունքների, կարող են հանդիպել 54 տեսակի թռչուններ, որոնք պատկանում են 25 ընտանիքների: Պետք է նշել, որ աղյուսակում ներկայացված 54 տեսակներից դաշտային աշխատանքների ընթացքում փաստացիորեն արձանագրվել է 39 տեսակ: Աղյուսակից պարզ է դառնում, որ ամենամեծ թվով ներկայացված խումբը ճնճղուկազգիներն են: Հաջորդ առավել տարածված խումբը գիշատիչ թռչուններն են, որոնք հիմնականում ներկայացված են ճուռականմաններով և մեկ տեսակի բազեանմանով: Բացի բազմաքանակ լինելուց, ճնճղուկազգիները ըստ նախնական տվյալների նաև տարածքի ամենատարածված բնադրող տեսակներն են: Նրանց բնադրությունը պայմանավորված է տարածքի գրեթե բոլոր կենսաբանակ հաբիթատներով, ինչպիսիք են բաց լեռնատափաստանային լանջերը, հազվադեպ ծառաթփային բուսականությամբ ծածկված լանջերը, փոքր քարաժայռային ելուստները և քարաբեկորների կուտակումները: Ամենայն հավանականությամբ բնադրության համար կարող են ծառայել նաև փոքրիկ ձորակները, որոնք ծածկված են խիտ թփուտներով: Տարածքի փոքրագույն վտակային անտառը նույնպես կարող է ներգրավել որոշ ճնճղուկազգիների, օրինակ՝ Ճանճորսների (muscicapidae) ընտանիքի ներկայացուցիչներին: Որոշ տեսակների համար բնադրական տեղամասեր կարող են հանդիսանալ նաև այն լանջերը, որտեղ առկա են ծառեր, ինչպես նաև հին, լքված պտղատու այգիները: Այնուամենայնիվ պետք է հաշվի առնել, որ դաշտային ուսումնասիրությունները իրականացվել են ուշ ամռանը և աշնանը, երբ

տարածքում թռչունների գտնվելու կարգավիճակի ճշգրտումը բավական բարդ է: Այդ պատճառով տեսակների տարածվածության և տարածքի յուրացման առավել իրական պատկեր ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ գարնանային դաշտային հետազոտություններ: Ըստ ներկայումս արձանագրված տվյալների՝ տարածքում ենթադրվող բազմաթիվ տեսակներից միայն երկու տեսակ են ընդգրկվում IUCN-ի ցանկում որպես LC և միաժամանակ Հայաստանի Կարմիր Գրքում՝ որպես խոցելի՝ VU կարգավիճակ ունեցող տեսակներ: Ստորև ներկայացվում է կարմիրգրքային տեսակների կարճ բնութագիրը:

Սպիտակագլուխ անգղ (Gyps fulvus) - Կարգավիճակ՝ Least Concern (ver. 3.1) Տեսակը համարվում է «Փոքր մտահոգություն» (ոչ վտանգված): Ըստ միջազգային գնահատման՝ սպիտակագլուխ անգղի ընդհանուր տարածվածությունն ու թվաքանակը համարվում են կայուն, թեև որոշ շրջաններում նկատվում է նվազում:Հայաստանում վիճակը՝ VU (Vulnerable / խոցելի)
Համարվում է խոցելի տեսակ: Տարածվածությունը սահմանափակ է, և բնական պոպուլյացիան զգայուն է սննդային բազայի նվազման ու այլ գործոնների նկատմամբ: Տարածում ուսումնասիրող տարածքում. Ուսումնասիրվող տարածքի վերևում երբեմն երևում է սննդի որոնման ժամանակ՝ լեշ փնտրելիս:
Բնադրության վայրերը գտնվում են հետազոտվող տարածքի սահմաններից դուրս:

**Քարարծիվ (Aquila chrysaetos) - Կարգավիճակ՝ Least Concern (ver. 3.1)** Տեսակը համարվում է «Փոքր մտահոգություն»՝ գլոբալ մակարդակում վտանգված չէ: Թվում է կայուն, և լայն տարածում ունի: **Հայաստանում՝ VU (Vulnerable / խոցելի)** Հայաստանում համարվում է խոցելի տեսակ: Թվաքանակը մեծ չէ, և որոշ շրջաններում նվազման միտումներ կան՝ հիմնականում մարդու գործունեության ու սննդային բազայի փոփոխության պատճառով:
**Տարածում ուսումնասիրող տարածքում.** Ինչպես նախորդ տեսակը (սպիտակագլուխ անգղը), քարարծիվը նույնպես հայտնվում է ուսումնասիրող տարածքի վերևում՝ սննդի որոնման ժամանակ: Սնվում է հիմնականում մոխրագույն կաքավով, փոքր կրծողներով ու նապաստակներով: Ինչպես և նախորդ տեսակի այնպես էլ այս տեսակի բնադրման վայրերը գտնվում են նախագծային տարածքից դուրս:

## Կաթնասուններ

Հիմնվելով առկա գրական տվյալների և էքսպեդիցիոն ելքերի ընթացքում ձեռք բերված տվյալների վրա՝ կազմվել է **Աղյուսակ 2**-ը, որտեղ ներառվել են կենդանիների ենթադրյալ ներկայությունը, տեսողականորեն նշված և փաստացի հայտնաբերված կենդանիների առկայության նշանները: ԲՊՄՄ ցուցակում և Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված տեսակները նշված են կարմիրով, տրված է համառոտ տեղեկատվություն:

**Աղյուսակ 2.** Ուսումնասիրվող տարածքի կաթնասունների ցանկը

| NO/ Fam | Scientific names | Armenian Name | English name | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 | 2 | 3 |
| Erinacedae | | | | | | |
| 1. | Erinaceus concolor | Սպիտակափորն ոզնի | Southern white-breasted hedgehog | + | + | |
| Bovidae | | | | | | |
| 2. | *Capra aegagrus* | Բեզոարյան այծ | Wild goat | + | -? | NT vu |
| 3. | *Ovis orientalis gmelinii* | Հայկական մուֆլոն | Armenian mouflon | + | -? | VU en |
| Soricidae | | | | | | |
| 4. | Sorex araneus | Սովորական գորշատամ | Common shrew | + | - | |
| Gliridae | | | | | | |
| 5. | Dryomys nitedula | Անտառային քնամուկ | Forest dormouse | + | - | |
| Leporidae | | | | | | |
| 6. | Lepus europaeus | Նապաստակ | European hare | + | + | |
| Suidae | | | | | | |
| 7. | Sus scrofa | Վայրի խոզ | Wild boar | + | - | |
| Mustelidae | | | | | | |
| 8. | Martes foina | Քարակզաքիս | Beech marten | + | + | |
| 9. | Mustela nivalis | Աքիս | Least weasel | + | + | |
| 10. | Meles meles | Գորշուկ | Badger | + | + + | |
| Ursidae | | | | | | |
| 11. | *Ursus arctos* | Գորշ արջ | Brown bear | + | -? | LC vu |
| Canidae | | | | | | |
| 12. | Canis lupus | Գայլ | Gray wolf | + | + | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13. | Canis aureus | Չախկալ | Jackal | - | + | |
| 14. | Vulpes vulpes | Սովորական աղվես | Red fox | + | + | |
| Felidae | | | | | | |
| 15. | *Felis silvestris* | Անտառային կատու | Wild cat | + | - | LC vu |
| 16. | Lynx lynx | Լուսան | Lynx | + | - | |
| Cricetidae | | | | | | |
| 17. | Cricetulus migratorius | Մոխրագույն համստերիկ | Gray dwarf hamster | + | - | |
| 18. | Microtus arvalis | Սովորական դաշտամուկ | Common vole | + | + | |
| Gerbillidae | | | | | | |
| 19. | Meriones persicus | Պարսկական ավազամուկ | Persian jird | + | - | |
| Muridae | | | | | | |
| 20. | Sylvaemus uralensis | Փոքր անտառային մուկ | Ural field mouse | + | + | |

1. –առկայությունը մասին տեղեկատվություն տարբեր աղբյուրներից
2. – առկայության տվյալներ՝ ըստ մեր հետազոտության
3.– կարմիր գույնով նշշված են Միջազգային և ՀՀ կարմիր գրքում գրանցված տեսակները

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի համար նախատեսված տարածքում հնարավոր բնակվող կաթնասունների նախնական ցանկը ներկայացված է 20 տեսակով **(Աղյուսակ 2)**: Ամենամեծ թվով խումբը գիշատիչ կաթնասուններն են, որոնք հիմնականում կազմված են շնանմանների և կզաքիսազգիների ներկայացուցիչներից: Երկրորդ ամենամեծ թվով խմբին պատկանում են փոքր կաթնասունները, հիմնականում կրծողներ և միջատակերներ: Դաշտային աշխատանքների ընթացքում աղյուսակում ներկայացված 20 տեսակից տեսողականորեն կամ կենսագործունեության հետքերով արձանագրվել են ընդամենը 10 տեսակ: Բաց լեռնատափաստանային բուսածածկ լանջերում գտնվել են փորսուղի փորած փոսեր և զուգարաններ: Այդտեղ էլ քարակույտերի և ժայռերի վրա որոնք ծածկված էին փոքր թփերով հանդիպել են կզաքիսն ու աքիսը:

Քարաբեկորների կուտակումներում հանդիպել է սովորական դաշտամուկը: Անտառային բուսածածկի փոքր հատվածներում արձանագրվել են սպիտակափոր ոզնին և փոքր անտառային մուկը: Աղվեսի հետքեր և արտաթորանքներ հանդիպել են գրեթե ամբողջ ուսումնասիրված տարածքում, իսկ գայլի հետքեր և արտաթողումներ երկու անգամ նշվել են անտառատափաստանոտ և ենթալպյան գոտիներում: Կենդանիներին ըստ տարածքի օգտագործման կարելի է բաժանել երկու խմբի՝ այն կենդանիները, որոնք օգտագործում են տարածքը որպես անցուղի, ինչպես գայլն ու աղվեսը, և այն կենդանիները, որոնց բնական բնակավայրը ամբողջությամբ ընդգրկվում է նախագծային տարածքի մեջ, օրինակ՝ ոզնին, կզաքիսը, աքիսը, նապաստակը, բոլոր փոքր միջատակերներն ու կրծողները: Աղյուսակում նշված բեզոարյան այծը և հայկական մուֆլոնը հիմնված են հին աղբյուրների տվյալների և որոշ տեղացի բնակիչների հաղորդումների վրա, սակայն ժամանակակից հետազոտական և բնապահպանական նախագծերի արդյունքում դրանց ներկայությունը տարածքում հաստատված չէ: Նմանապես, վայրի խոզը, գորշ արջը և անտառային կատուն ընդգրկված են աղյուսակում տեղացի բնակիչների հաղորդումների հիման վրա, որոնք նշել են դրանց հազվագյուտ հանդիպումները վերջին շրջանում, սակայն այս տեղեկատվությունը անորոշ է և պահանջում է հետևողական ստուգում հետագա դաշտային այցելությունների ընթացքում:

## Լուսանկարներ

| | |
|---|---|
|  Սպիտակագլուխ անգղ |  Տափաստանային ճուռակ |

| | |
|---|---|
| <br>Լորաճուռակ | <br>Սովորական հողմավար բազե |
| <br>Մոխրագույն կաքավ | <br>Ժուլան |

| | |
|---|---|
| <br>Անտառային կաչաղակ | <br>Լեռնային դրախտապան |

| | |
|---|---|
| <br>Սևուկ կարմրատուտ | <br>Սովորական քարաթռչնակ |
| <br>Կարմրակատար | <br>Կանեփնուկ |

| | |
|---|---|
| <br>Սպիտակափորն ոզնի | <br><br>Նապաստակ |

| | |
|---|---|
| <br>Աքիս | <br>Սովորական աղվես |
| <br>Գորշուկի կղանք | <br>Գայլի կղանք |

| | |
|---|---|
| <br>Ռադդեյի ժայռային մողես | <br>Կովկասյան ագամա |



Անդրկովկասյան սահնօձ



Կովկասյան կատվաօձ



Կանաչ դոդոշ



Լճագորտ